ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. սեպտեմբերի 13 թիվ 91 -Ա

ՊԱՎԼԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ և 96-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետը և Պ.Պողոսյանի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի դիմումը՝ *կարգադրում եմ.*

1.2011 թվականի սեպտեմբերի 13-ից Պավլիկ Պողոսյանին նշանակել «Դիանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև «Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՍԻՍՅԱՆ